

մնացեալ ինչքան ուժով մարդ ես դու, որ չես սրպանուէ ես չես փախչի»:

Ասաւ. «Քեզնից փախնող տղայ չը կայ ըստեղ, ձեռնէդ ինչ կալում ա՛ արաս. մէկ դիւրոյ Իշխանն Աբլաղին տուեց, որ տուեց՝ Աբլաղն հէնց իմացաւ սարն է՛կաւ իր վրէ՛ն: Ասաւ. «Էս կայ չ՛կայ, մեր ջրնսիցն ա. ազնեանց ՚) ջնսիցն ա (դրա հրժար են ասում ընդոնց ջրնսին . Սասունայ ճաեր»):

Աբլաղն ասում ա. «Սրէ՛ն ՚) իմն առ»:

«Քեզնից վախենող տղայ չը կայ, ասում ա, արի»:

Աբլաղը բարկացաւ, ձիուն մէ գանգու տուեց, ձինն ու քինքը թափով կնաց գիւրգոյ տուեց Իշխանին: Իշխանն ալբըհայր ՚) ձիուցն ընկաւ: Յիջաւ որ վիզը կտրէր: Ասաւ. «Ա՛ստուած, դու իմ կոխը կտրեցիր, բա Աբլաղի՛ կոխը ոնց պըտի կտրես. հըմի Աբլաղը կը գայ»:

«Իու ինչ մարդ ես, ասում ա, որ Աբլաղին ճանաչում ես»:

«Ես նրա փոքր եխպարն եմ»:

Աբլաղը տեսնում ճանանչում ա, որ իրա աղպէրն ա

«Տունդ քանդուի, Աբլաղն ասում ա Իշխանին, է՛ն գիւրգը որ դու տուեցիր ինձ՝ քիմացայ որ մեր ազգիցն իր, է՛նքան ա, որ արուներ աչքերս լցուեր էր, քէ չը ճանաչեցի»:

Վեր ա ունում ախպօրը, հեծնում են ձիանքը, իրանց եսիրն էլ ետ են դարձնում իրանց գեղը Սասուն, է՛գ եսիրի հետ էլ պերում ա Աբլաղը իրա կնկանը: Գալում են գեղը: Մէ առ ժամանակ արանքից չընցնում ա Աբլաղն ընկնում մեռնում ա: Աբլաղը որ ընկնում մեռնում ա՛ ըրրա կնիկը էրեխով ա ըլնում: Էս անգամը, որ Աբլաղը մեռնում ա, Իշխանը իր ձիւնը հեծնում ա, ասում ա Վեռի-Թորոսին. «Իու գինաս քաղաքը, ես էթում իմ ճգնութուն անելու սարը, անտառները: Իրը մի փոքրաւոր ծառայ վերցնում ա հետը, ձիւնը հեծնում ա ու էթում, էթում սարը ճգնութուն անելու»:

Գ.

Գ Ո Ւ Ն Ի Կ—Ո Ր Ր Ի Կ

Էդ օրուշաղը, Աբլաղի կնիկը, ժամանակին ազատուում ա ու մէկ տղայ ա պերում: Փըհանէն պերում են կնքում են է՛դ տղին: Տէրաէրը Հարցնում ա, թէ է. «Քեռի-Թորոս, տղի անունն ինչ գնենք»:

1) Ազնանց ցեղից: Ազնանց ցեղից, նույնն է թէ Ղյս ց-ազն: Պատմօրը բացատրեց, թէ այդպէս էր կոչում այդ ցեղը նրա համար, որ իւր սերունդները պարթև, հակաչ, հին, միևնոյն ժամանակ աստուածային ծագումն ունեցող, և թէ—թիւրքերէն ազնաւոր նշ. է գէ, հոգի առնող հրեշտակ, որից և ազնանց: 2) Կերթ: 3) Իսկոյն:

«Քանի որ հեթանոսներն ահապա ահապա, հրոսպեր չունին բռնող՝ շատ դառնութիւնով պրտի անցնի ըտուր ժամանակը. հենց անուրը գնենք Դառնիկ—Ռոբիկ:

Որ կնքում են պրծնում են, Քեռի-Ռորոսը մօրից էրխէն ճրդատում ¹⁾ ա, չունքի էդ կնկաց միտքը ծուան էր, Բաղդատայ խաղէֆին էր միտքը: Քեռի-Ռորոսը վախում էր, որ տղին վնասէր էդ կնիկը, չունքի, որ մենանայ՝ էլ ետ պրտի էթաց Բաղդատայ խաղէֆի լստ կռիւ անի, ազնանց ջրնսիցն էր, ուժով պրտի բլէր:

Ին բողէին Քեռի-Ռորոսը մարդ ա զրկում գիւղի մէջը, թէ տեսէք հւմ օղլուշղն ա թագաց ազատուէ էրխայ պերէ, նրա մարդին զ'անլէէք կայ:

Եթում են տեսնում, որ մի քեռիք մարդի կնիկը ազատուեր ա, էրխէն էլ մեռեր ա: Դ'անլում պերում են էդ մարդին Քեռի-Ռորոսի կուշար: «Էս տղէն, ասում ա, տար թօ քո կնիկը պահէ. քեռիք մարդ ես, քեզի հաց կը տամ, փող կը տամ, լիովի քո վարձը կը տամ: Թէ էրխին մի պան պատահի՝ քեզի տարաղաջից ²⁾ կախ կ'տամ»:

Էդ մարդը վեր ա ունում էրխին տանում ա տալում իրա օղլուշղին: Պայպանում է օղլուշղը էդ տղին չում մի հինգ տարի: Հինգ տարին որ թրմում է՝ բերում սաղ-սալամաթ տալում ա էրխին Քեռի-Ռորոսին: Քեռի-Ռորոսը տղին սկսում ա պայպանել:

Տղէն ըլում ա տաս, տասնըհինգ տարեկան:

Սփօր որ տաս, տասնըհինգ տարեկան ա ըլում տղէն՝ էլ ետ Բաղդատայ խաղէֆէն լսում ա, որ Աբլաղը մեռեր ա, Իշխանն է զընացէ սարերը ճգնութուն անելու: «Քաղաքին մարդ չը կայ, ասում ա, կնանք առ ու ետի անենք առնենք ու կանք»: Թուղթ ա դրում իր խողի մըջին, ինչքան որ ըրեաթ ³⁾ ունի իրա թրի տրկին, հրամայում ա, թէ անունը ինչքան որցեղէն կայ փէտ պուտղ, պէտք ա կայ: Ինչքան զօշուն ա ժողովում, էնքան, որ աստղին հէտք կրլի, զօշունին հէտք չիլի: Դօշունը վեր ա ունում ու գալում Սասունայ չորս կողմը առնում նստում: Քեռի-Ռորոսին ջուղաք ա ճամփում, թէ «Մարդ ունի» ուղարկէ կռիւ անենք, թէ չէ՝ քաղաքը առ ու ետի պրտի անեն՝ առնեն էթամ»:

Քեռի-Ռորոսը ջուղաք ա անում, թէ Աբլաղը մեռեր ա, Իշխանն է գնացէ սարերը ճգնութուն անելու. մէ տասնըհինգ օր ժամանակ տայ ընձի, իմ հարսի մեռը ոտը տեսնեմ ⁴⁾ ու տամ առնի էթայ»:

¹⁾ Զիւլում, անքատում է: ²⁾ Կախալան: ³⁾ Ժողովուրդ, հպատակ:

⁴⁾ Պատրաստութիւն տեսնեմ հարսի համար:

Իդ բանին Քաղաքացի խալիֆէն շատ ուրախութեամբ ընդունում աս:

Սասունաց չորս բոլոր բազան ¹⁾ աս ըլլում, չորս հատ էլ զարգէան ²⁾ աս ըլլում: Քեռի-Թորոսը դեարգէանները խողի տուեց, որ քաղաքի մէջը մարդ չը մննի դոշունի միջից, փեղաւանգութիւն ³⁾ տնի: Խօղեց զարգեանները:

Գառնիկ—Որրիկը էլաւ. տեսաւ որ քաղաքի մարդիկը թօփուն-թօփուն էլած ⁴⁾ զրսահ ⁵⁾ ին անում: Ո՛ր թօփունի մօտը կնաց՝ էն թօփունը քանդուաւ, չը կայնան որ էդ տղէն բան հասկընէր, ընդուր հրմար, որ չին զրմիշ անում ⁶⁾, չունքի ազնանց ջընս էր, թասիրով էր կ'էրթար կռիւ կ'էնէր, կամաւոր չէր տայ, որ իրա մէջը տանին. ասում են՝ տանք էս օղուշաղը թօ տանի, մեղնից ռաղ ըլի:

Գնաց տեսաւ, որ էրկու էրիխայ ճան են խաղում: Գնաց ըղոնց ճաներուցը փակցրեց: Էն էրիխեքու մէկը աղաչեց ըղուր, թէ իմ ճանը տուր: Մէ սիլլաց տուեց էդ ըրիխին, էրիխի փիզը ճառաւ: Սասա. «Որ էդ քան ուժ ունիս՝ դուշմանն էկէ քաղաքի չորս կողմն ասեր աս, մօրդ հրմա ուզում աս քաղաքը առ ու եսիր անի»:

Գնաց Քեռի-Թորոսի կուշարը: Քեռի-Թորոսին ասաւ. «Քեռի-Թորոս, Հսպէս աւարիկայ կայ, դու ընձի չմն ասըմ»:

Սասա. «Ո՛րդի, տուտ աս, տուտ աս, մի հաւատայ»:

«Ի՛նչ, աստղին, խողին, քարին հէսար կայ, դոշունին հէսար չ'կայ»:

«Ո՛րդի, ասում աս, արի էդ դանջըը տանք թօ առնի էթաց, մեր եսխից ձեռ քաշի»:

Սասում աս. «Չնար չը կայ, քեռի, քանի որ ես սօղ եմ՝ իմ մէրը չեմ տայ տանի: Եփօր ընձի սրպանեն՝ նոր թօ իմ մէրը տանեն»:

Ինչ իլլաց ու ճար անում աս Քեռի-Թորոսը, տեսնում աս որ ճար չը կայ՝ «Ո՛րդի, ասում աս, դու գիտաս, կռիւ անում ես արա»:

Սասում աս. «Ին իմ հէրը որ մեռաւ, բա գիւրդ, նետ, անեղ, ձինը, թուրը ուր աս իմ հօր սարքը»:

«Քո հօր սարքը, ասում աս, սրդի, էն, ինչ որ թուրն աս. գիւրդն աս, նետ ու անեղն աս, քօղն ⁷⁾ աս, բէանէալարին ⁸⁾ աս, էդ սարքը բոլորը մէրդ յցրէ մի օթաղի մէջ, դուռը փակէ, պայնին էլ իրա կշտին: Էն ինչ որ ձինն աս, գոմի մըջին աս. ընդուր եմը. ⁹⁾ ջուրը երթըկից են տալում, մարդ չի կարում մօտ էթաց: Սասա. գնա մօրիցդ ուզէ. թէ կը տայ՝ դուն էլ գնա կռիւ արա»:

¹⁾ Պարիսպ: ²⁾ Գարպաս: ³⁾ Սուհանգութիւն, սոտանգութիւն: ⁴⁾ Խուճք-խուճք ժողովուած: ⁵⁾ Խորհուրդ: ⁶⁾ Խղհալ: ⁷⁾ Թագ: ⁸⁾ Միրանին: ⁹⁾ Կերք:

Տղէն ուղեց էթալ, «Ո՛րդի, ասաւ, ըզենցութենով քո մէքը քեզի գատ չի տայ, քանի որ էն լսէ որ Քաղաքի խալիֆին էկեր ա, հրմի էն ուրախցեր ա Յէթաս, ասաւ, մօրդ կասես, «Իմ հօր սարքը տու. դուշմանն էկէ դուռն առէ. էթամ կախ անեմ, դուշմանի ջուղաքը տամ»: Էնի, ասաւ, քեզի կանիծէ, սարքն է չի տայ: Էփօր որ կանիծէ, սարքն էլ չ' տայ դու կասես. Մէքիկ, չունքի բունց ա, թաւէն վէ կալ կնա գետի ափից մի թաւայ աւաղ պէ, եղը քանգէ լից թաւէն, դիր կրակի վրէն, թօ աւաղը եղի մըջին կարմրի ես պատկեմ, դու լից իմ պերանը, թող իմ ջիգեարս խաշուի, մեռնեմ, որ չ'տեսնիմ որ դուշմանը քէ տանըմ ա, նոր քէ առնեն տանեն»: Էնի, ասաւ, որ պերեց աւաղը կարմրցուց եղով, կպերէ որ թաւով լըցնէ քո պերանը, դու ասա, թէ «Մէքիկ, թաւով լցնես» կը թափի վրէս, չի թափի պերանս. ձեռովդ վեր կալ աւաղի տըկից ու լից պերանս, որ շուտ մեռնիմ»: Եփօր որ մէքդ ձեռը կ'տայ աւաղի մէջի, որ շուտ վերնի, որ իր ձեռն էլ չ'երեցի, լցնայ պերանդ որ դու շուտ մեռնիս, դու ընդուր ձեռը պինդ պանէ: Էն որ կասայ «Շաման, ձեռս էրեցաւ», դու ասա «պայնիքները տուր, որ ձեռդ թողում»:

Քեռի-թօրոսն էդ չուսումը տուեց տղին, ու տղէն էլ կնաց զըբայ մէքը: Որ կնաց մօր կուշտը, «Մէքիկ, ասաւ, շուտ արա եկ իմ հօր սարքը տուր որ դուշմանը էկեր ա դուռն առեր ա»:

«Հա հա հա, ասաւ. ինքն է չը մեռնի, իրա անուռն է. հալա չի գորացէ՝ չորանում ա»:

«Դէհ, ասում ա. մէքիկ. չունքի դալիկ¹⁾ լես, դնա թաւէն վեր կալ գետի դրաղից աւաղ լից առ արի, եղն էլ քանդի դիր կրակի վրէն, լաւ եացրու, աւաղով լցրու իմ պերանը որ ես մեռնեմ, քեզի տանեն՝ իմ աչքը չը տեսնի»:

«Ըտմնց ասա, հա, որդի գորանաս դու»: Վեր ա ունում թաւէն ու էթում գետի դրաղից աւաղը լցնում պերում ա, եղն է քանդում լըցնում վրէն ու դնում օջաղի վրէն, կրակը վտում ու կարմրցնում ա: Բերում, որ թաւէն շունէ տղի պերանը՝ Վան, ասաւ, ըզենց չ'էլաւ, մէքիկ. ըզենց չի լցուի պերանս»:

«Իա ինչ անեմ»:

«Ձեռովդ վեր կալ. այրըհայը լից պերանս»:

Թաւէն դնում գետինը, ձեռը տալում ա աւաղի մէջը, որ լըցնայ տղի պերանը. ջըհաննամը թէ ձեռս կ'էրեցի, չէ էս կը մեռնի, ես կէթամ Քաղաքայ խալիֆին կասնեմ:

Դասնիկ—Որքիկը մօր ձեռը աւաղի մըջին պանում ա:

¹⁾ Համառան:

«Ընձան, ասում ա. իմ ձեռն էրեցաւ Ասծու սիրուն»:

«Զէ, ասում ա, բանի որ իմ հօր սարբի տեղը չես ասէ: ու բալ-
նիքները չես տրւէ՝ ես ձեռը չեմ թողայ»:

Հանում ա պալնիքները տալում ա տղին:

Իթում ա սարբի դուռը բանում ա: Ձեռը բցում ա, գիւրզը չի
կարում գետնից վեր ունի. նետ ու անելը նմանապէստ:

Իթում Քեռի-Թորոսի կուշտը, ասում ա. «պալնիքները առեր
եմ, հէսա դուռն է բացեր եմ, մէ վեց — օխտ մարդ համբէ, ասում ա,
թող էթան ինչքան սարք կայ բոլորը պերեն ըստեղ»:

Վեց — օխտը մարդ Քեռի-Թորոսը ճամբում ա Լթան սարքը
պերելու. Սարքը պերում են բցում Քեռի-Թո. ոսի դէմ: Պերում ա
բօղը տղէն դնում ա կոխը, լջնում ա աչքերը: Բէանէավարին հագ-
նում է՝ գետնից բաշ՝ էթում, է թուրը դրնից¹⁾ չի կարում քաշի: Վեր-
ջապէս ամենասարքը տղին չէ ջարմարում, բանի որ տղէն ջահլի էր:

Քեռի-Թորոսն ասում ա. «Պերէք, ասում ա, տղին ճամբենք՝
վանահաչրի կուշտը, որ բնակում է Բանձրից Մարաթիկ Ըստուածա
ծին»: Քեռի-Թորոսը վերնում տղին տանում վանահաչրի կուշտը.
ընկնում վանահաչրի ոտը. «Սխտ օր, ասում ա, մեզի ժամանակ է մնացէ,
որ Բարդասայ կապաշտի թագաւորը մեր քաղաքը առ ու ետիր անէ
տանէ. էս օխտը օրը, ասում ա, որ քշեր ու ցերիկ աղօթք-պատա-
րագ անես, որ տղէն Ստորձու շնորհով լցուի Լթայ դուշմանի ջու-
ղաբը տայ»:

Սկսում է վանահաչրը յացով արտասուով եօթն օր պատարագ
անել, Ըստուած տղայի, Աստուած փառաբանել, որ տղէն սուրբ
շնորհով լցուի: Եփօր օխտը օրը թըմըմաւ՝ Քեռի Թորոսն Լկաւ վա-
նահաչրից շնորհակալ էլաւ, տղին վեր կալաւ ու տարաւ:

Ինաց բօղը դրեց, կայնեց ճակտի օրի լղիին, բէանէավարին
հագաւ, հալա մի թիղ կարճ էկաւ: Ջրզմէքը²⁾ հագաւ, անբախ որ
ոտները մտաւ. գիւրզը մէ ձեռով պանցրեց հասնելու գիւմին, ինչպէս
մի յըրույ³⁾, թուրը նմանապէս դրնից քաշեց, նետ ու անեղը, վեր-
ջապէստ հօր սարքերը տղին հալա պակաս էր մնում. չէր աւելանում:

Ինաց տղէն ձիու դուռը պացաւ: Ձինը խրինջաց ու էկաւ տղի
վրէէն: Տղէն «Սրհնեալ բարերարն» ասաւ ու ձիու գլխին մի իւմբրուլս
տուեց: Ձիու բէ՛նը գլխուցը թափաւ: Ձինը տղի գտաբը⁴⁾ ճանան-
չեց: Ձինը դուս քաշեց. գեամը տուեց դրեց կոխը, թամբը վրէն,
դուլան դուզխուեց⁵⁾ քաշեց, ձինը պերեց հօրը սարբի կուշտը: Կու-

¹⁾ Պառանկեց: ²⁾ Կօշիկ: ³⁾ Ձեռնափայտ: ⁴⁾ Ալժ, գորովիւն
⁵⁾ Ձիու փորքաշը:

րից բոլոր դրեց կոփոր, բէանէավարին հապաւ, ջրզմէքք բաշեց
 ոննեքը, թուրը կապեց վրէն, նեա ու անեղը, գիւրը, ու Հեճաւ իր
 ձին Քեռի-Թորոսն ասաւ. «Կնացէք տարգեաւհի մէ զանայը ¹⁾ պաց
 արէք, թող դուս կայ, էլ ետ խօղէք. ջահիլ տղայ ա, հրմի կը սը-
 պանին, բտոնց ջընտրց էդ մինն ա մնացէ, կ'վերջանայ, մեր եսխէն
 է կը պըրծնի:

Կնացին ըզոնք, որ տարգեաւհը բանան:

Ձին ութ—ին—ասա տարի կնայուկ, չոս ²⁾ ձի. տղէն մէ զան-
 դու խփեց ձիուն, ձինը հաւալամիշ ըլաւ ³⁾: Ինքը գիւրըը տուեց
 բէադանը մէ կանը իջըցրեց ընկաւ զօշունի մէջ, գնաց զօշունի մէկ
 էաթակին ⁴⁾ կայնաւ ու սկսեց. «Յրհնեալ Քարերտը, կամքն օրհ-
 նեալ. էն Արարողին, զանչնեք տարերու սրբեր, ձորերու կոյս Մայր
 Աստուածածին, Դու օգնական պահապան ըլնս այս Դաւանիկ—Որբի-
 կին»: Դանչեց իրա Աստուածն ու ընկաւ զօշունի մէջ: Սկսեց էդ
 զօշունը ջարդիլ: Ինչքան որ չհնքը ջարդում էր՝ զօշունը հասաստ-
 ւում էր, շտտանում էր: Դէ, ինքը ջահիլ տղայ, կուի չէ տեսէ,
 անկործուիլ մարդ: Օրը տարածամեց, իրիկուան մթանը ձինը բշեց ու
 էկաւ բէադանի տակին կայնաւ. «Քեռի-Թորոս, ասա, մինդ եկէք
 ըստեղ կայնէք, ես իշկեմ ձեզի, որ իմ սիրտն է ուրախանայ, ես կը-
 աուիմ, դուշմանի ջուղաբը տամ»:

«Ո՛րդի, ասա, թարզը արա էդ բանից, թօ էս զանջըը առ-
 նի էթայ»:

«Ձիլի, Քեռի-Թորոս, ասա, քանի որ ես սող եմ, չեմ թողնի
 դուշմանն էս քաղաքը մննիս Ասա, բա մեր ցեղից սկի հօրօխպէր,
 ախպէր չի՛նչ, որ կայ ընձի օգնութուն անի»:

Ասա. «Ո՛րդի, քեզ մէկ հօրօխպէր ունիս, Իշխան անուանաւ որ,
 կնացէ Ծովասար ճգնութուն ա անըմ էս քառասուն տարի»:

Տղէն ասա. «Ճամբէի ձրն ա»:

Թէ. «Էդ է, էն էրևող սարն ա, քշէ գնա»:

Ձուբի քշեր էր, քշերը կուի չեն անի, պըտի հանդատանան
 առաւ օտը ըլլեն նոր կուի անեն, տղէն ձինը քշեց զբբայ հօրօխ-
 պէրը ու կնաց:

Էլի Իշխանն էբազին տեսաւ, որ չաշխարք լուս ու արև էր,
 Սասուն՝ մութնն ու խաար: Կէօքարին ⁵⁾ առաւ, «Տղայ, գնա տես
 ձինն իր մըսըրբի տակը բանդում ա»:

Տղէն կնաց տեսաւ, որ ձինը էնպէստ ա մըսըրբի տակը բան-
 դում, որ նալներուց ⁶⁾ կրակ ա ըլնում: «Այ հայ, ասա, Արլաղը մե-

¹⁾ Փեղգի ²⁾ Գիւթ ³⁾ Կասաղեց, գալրացաւ: ⁴⁾ Կօզմը: ⁵⁾ Ծառայ: ⁶⁾ Պայտ:

ուս, ես է էկեր եմ ըստեղ, էն քա՛ճրն էկեր ա էլի առ ու ետիր անի տանի: Տղայ, ասաւ, մէ վեր իշկի դուռը, գալող չը կնչ:»

Տղէն իշկեց, տեսաւ, որ հեռուից մէ ձիաւոր գալում ա. էկաւ ասաւ, թէ. «Պալլահ, հեռուանց մէ ձիաւոր գալում ա»:

Ասաւ. «Արի ընկի իմ թևերու տակ, ընձի հանէ դուս», (ծերացեր էր, ոչժից ընկեր էր)

Զքմ ըստնց ըլլելը տղէն էկաւ դազի ¹⁾ դուռ: Իշկեց Իշխանը, տեսաւ, որ էսի իրա ախպօր ձինն է: Մկեց լալով հարցմունք անել (ողր ա անրմ). «Ձին Արլաղինն ա, դուն Արլաղը չես: Քօլն Արլաղինն ա, դուն Արլաղը չես. բէանէավարինն Արլաղիննն ա, դու Արլաղը չես: Թուրն Արլաղիննն ա, դուն Արլաղը չես. գիւրզը Արլաղիննն ա, դուն Արլաղը չես»:

Սկաւմ ա տղէն, թէ. «Ձինն Արլաղիննն ա, ես Արլաղը չեմ քօլն Արլաղիննն ա, ես Արլաղը չեմ. բէանէավարինն Արլաղիննն ա, ես Արլաղը չեմ, թուրն Արլաղիննն ա, ես Արլաղը չեմ, գիւրզն Արլաղիննն ա, ես Արլաղը չեմ: Ես Արլաղի Դառնիկի — Որբիկն եմ»:

Յիմանում ա. որ աղպօր տղէն ա: Լալով տղին ձիուց վեր ա պերում ու տանում գազի մէջ: Հսեղ տղին հարցմունք է անըմ, թէ. «Ընչի՞ հըմար ես էկէ»:

«Հօրօխպէր, դուշմանն էկէ դուռն առեր ա. էկեր եմ քեզի հաւար եմ անում, որ կաս ընձի օգնութիւն անես»:

«Ո՛րդի, ասում ա, ընձնից քեզի օգնութիւն չիլի, էս քատասուն տարի ա իմ ձեռքս սուր ու թուր չեմ առէ, Ասարձու խէտ էլ էնպէս պայման իմ արէ, որ էլ ըստուց ետ էլ չաւնես, քանի որ չեմ մահացէ»:

Տեսնում ա որ հօրօխպէրից օգնութիւն չը կայ: Զորերը հանում են քնում էդ էրի մըլին:

Յառաւուտը որ քեկից վէր են կէնում, ասում է. «Տղայ, գնա բող ձին քաշէ. թող տղէն հեծնի էթայ. կարմիր ձին (տղի ձին) նիշացեր ա»:

Ըթըմ ա բող ձին թամբում, սարքում և քաշըմ դուս:

Տղէն ըլլում հօրօխպօր ձեռը համբուրում, հօրօխպէրն է օրհնում, տղէն է հեծնում ձին: «Գնա, որդի, Ոստուման քո խիտ ըլլի, զօլլաղ իլ, դուշմանից մ: վախեցի, քանի որ սաղ ես կուի կանես, մինչև իրիկուն սուր ու թուր կը պանցնես, զօշուռի մըլին չես մնայ, քնուկ տեղը չանկարձ քեզի կը պանեն խաբեբայութեանով. որ արևը կը մննի՝ ձինդ կը քշես կըլլես մի սարի գլխի, սաքինադ կանես ²⁾, օյաղ

¹⁾ Զադայ նշանակում է այր, հզնարան: ²⁾ Ար հանգստանաս:

կրես, չես քնի, չունքի ձիուդ իզը ¹⁾ կ'ըռնեն կ'կան, քնած տեղդ քեզի նետ ու անեղով կտան»:

Տղէն ձինը բշեց բտուց: Քիչ էրիցը հետացաւ, առաւ. «Իմ ձին լաւ էր, էս զօրաւն ²⁾ ա, սաքի թէ ինձ օգնութուն արաւ»: Բարկանայով ձիուն մէ զանգու տուեց: Ձինը կ'նդէստ հաւալամիշ էլաւ, որ իր ծաբովն առաւ տանեմ Սև ծովի, Սպիտակ ծովի արանքը քցեմ ³⁾: Տղէն տեսաւ, որ էս ձին հաւալամիշ էլաւ, պըտի տանի սարից ձորից զցէ սըպանէ: Ձիուն էրկու անկըջի արանքին մէ իւմբուդ տուեց ⁴⁾: Ձինն Աստրծու հրամանքով լէզու էլաւ առաւ. «Տըղայ, զնա զուրբան էդի էն իւմբուդին, քէֆը զլիւիցս թափաւ, թէ էլ ⁵⁾ քեզի Սև ծովի, Սպիտակ ծովի արանքը կը քցի. թէ ⁶⁾ քո ձիու նման օխտը ձի իմ դանաղը չլլի»:

Առաւ. «Բձզ ձի, զլիւիդ արևիդ մեռնեմ. ես չիմացայ որ էդ հունարը քեզի ունիր. եթէ էլ քնանի՝ էն զանգուն քեզի չի տայ: Դէ բշա, առա, Աստրծու հրամանքովն ա. թէ էդ հարուր մարդ սըպանեա, ես հազարը կը սըպանեմ բերնով, ոտներով»:

Տղէն բշեց կնաց զօշունի աթագին ⁷⁾ կայնաւ: Սկսեց բտեղ «Որհնեալ բարեբար», կամքն օրհնեալ, էն Արարողին, զանչենք-սարերու սրբեր, ձորերու կոչս Սալլ-Աստուածաձին, զու օգնական, պահապան ըլնս էս Դառնիկ-Որբիկին»: Ընկաւ զօշունի մէջ: Սկսեց զօշունը ջարդել: Չունի լրիկուն որն էր ինքը սրով թրով, զըրզով, նետով, անեղով ջարդում էր, էրկու էնքան էլ ձինն իր ոտներովն, իր պերնովը սըպանում էր: Արևը որ մտաւ տղէն բշեց իր ձինը կնաց մէկ սարի կլլի իջաւ: Ձինը թողեց արածայի, բէանէավարը քաշեց զլլիին ու քնաւ. նեղացուկ, խամ աղայ:

Բաղդաստայ խալիֆէն հրամայեց իր զօշունի մարդիկին. «Այ գիտի, առա, էդ տղէն խամ տղայ է, էդի նեղացեր ա. հըմի որտեղ իջեր ա՝ պառկէ քներ ա: Ըտու ձիու իզը պունէք կնացէք. բտու ձիու գոնաղները գութանի նման քանդած կլլի: Ինչ մարդ, առա, որ ընդու սպանէ, զլլիւր ինձ պերի, առա, անունն իմը ըլի, երկիրն իրը ըլի»:

Իզը պունին ու կնացին: Կնացին տեսան, որ տղ'ն բէանէավարին զլլիին քաշէ քներ ա: Սկսին որ տղին նետ ու անեղով տան, չորս բոլորն առան: Տղէն նեղացուկ, ջարդուկ՝ քնի մէջ խաբար չեղաւ: Բօզ ձին ֆրոտացնում ա չորս բոլոր, ամէն զէանին ⁸⁾ ձի հա-

¹⁾ Հ'աք: ²⁾ Վաս: ³⁾ Պատմողը բացատրեց, որ Ստամբուլի ծովն է այդ կովի, որի ջրի մի կողմը սպիտակ է, մյուս կողմը՝ սև: ⁴⁾ Բառուցքով զարծեց: ⁵⁾ Մէկ ծայրին: ⁶⁾ Մեղամ:

րուր ջան ջարդում, դալում տղի վրէ՛ն կաշնում, որ նես ու անեղով չը տան տղին:

Իշխանի նէօբարը կնաց տեսաւ, որ կարմիր ձինը մըսբքի տակին քանդում ա: Էկաւ ասաւ. «Խնայֆայ, կարմիր ձինը էնպէս ա մըսբքի տակին քանդում, հըմի չէրը մեր գլխին կիջացնի»:

Ասաւ. «Վնչ, վնչ, տղէն նեղութենի մըջի ա. ես իմ քներ ա, ինչ ա. ձինը թամբէ կնա դուս»:

Ձինը թամբեց քաշաւ:

Ասեց. «Ն'րի, իմ ձեռից պունէ տար հեծըցրու ձին»:

Հեծաւ ձին, դանչեց իրա Աստուածն, ընկաւ ճամբայ: Ձինը բշեց, տեսաւ, որ ճամբի մէջ մէ բարդու Երկար ծառ կայ: Ասաւ. «Մէ փորձեմ, ձինն էրկու դուս քշեմ, ձինը տաքացնեմ, գամ, ասաւ, էն թնփի խես էս ծառը խրտոտեմ քօբըխան անեմ, թէ կարացի՝ կէթամ տղի հաւարին. թէ չը կարացի՝ չեմ էթայ: Ձինը բշեց ու թնփի խես ծառը քօբըխան արաւ: Ծառը դրից ուսին ու ձինը քրշեց դնաց: Գնաց տեսաւ, որ դօշունը իրար քամակի ըլլում են՝ դրբայ սարը: Կարցրեց էդ դօշունի մարդիկին, թէ. «Ո՛ր էք ըտենց ըլլում էդ սարի»:

Թէ. «Ենդդատայ խալըֆի դուշմանը փախել ա էս սարի գլօխը, ըլլենք բայքի սըպանենք» (ըդոնք էլ չեն ճանանչում, հէնց են իմանում դօշունի մարդ ա): Ձինը բշեց կնաց հասաւ Դաւնիկ Որբիկին: Տեսաւ որ տղէն քներ ա, բօզ ձինը արուն—քրտնքի մըջի ա, դօշունն էկէ ժողուէ չորս բոլորը առեր ա, ձինը Ֆրառում է չորս բոլորից մի 300—400 սըպանում ա, գալում տղի վրէ՛ն կաշնում. որ էլի գալումին՝ ձինն է եդ ջարդում ա դօշումին, տղէն է քներ ա: Էդ դօշունի մարդիկի մըջիցը ծառը պարպեց, տղին բրթեց. Տղէն օշանմիշ էլաւ ¹⁾ տեսաւ, որ դօշունը չորս բոլորը առեր ա:

Տղէն էլաւ հեծաւ ձինը: Ձինը բշեց գարբով դօշունի մըջից էլաւ դրադ: Հօթօխպէրն էկաւ տղի կուշտ: Ասաւ. «Տըդայ, ասաւ, էս քառասուն տարի ա ես սուր թուր չեմ բանցրէ, էլ չեմ բանցնի, Աստծուն ըխտագրութիւն եմ արէ. ես էս ծառով կը ժողուեմ կը պերեմ, դու թուրով կարա. հնձի. ես կը ծորեմ, դու ծոր քրփի: Վերյապէտա էդ դօշունը էնպէստ ջարդեցին, որ խարբպերը կտրեցին, Բարդատայ խալըֆին էլ սաղ պունեցին. «Ո՛րդի, ասաւ. արի դու էս մարդի գլօխը կտրէ, վերջացրու, ըստուց քէ խաթայ կը կայ»:

«Ձէ, ասաւ, կ'տանեմ իմ մօրը դուլուդ կանի, ցան կը պերէ, ջուր կը պերէ, մոխիր կը թնփէ, — դուլուդ կանէ»:

Հօթօխպօրը մնաս—պարով արաւ ու կնաց իր ճգնութենին, չէրի մէջը:

¹⁾ Զարթնեց.

Տղէն առաւ էկաւ Բաղդատայ խալըֆինն
Քեռի-Թորոսն էկաւ, ուրախացաւ, փաթթաւ աղի վիզը, էրես-
ները պաշեց, թէ. «Ո՛րդի, արի դու ըստու կլօխն է կտրէ»:

«Զէ, ասաւ, ես պերեր եմ որ տանեմ իմ մօրը գուլուղ անէ»:

Ասաւ. «Ո՛րդի, ըզուց քէ վնաս կըզայ»:

«Էս ինչ ա, որ ըստուց փնաս ըլի»:

«Իէ, դու գինաս, սրդի. քո մեղքը քո վիզն ըլի»:

Տարաւ Բաղդատայ խալը Նին դրեց մօր կուշտը:

Մնաց մէկ ժամանակ. Բաղդատայ խալըֆէն ինչպէս մարդ ու
կնիկ ըլէին. (տղէն չէր հասկանում): Համա ինչ վախտ տղէն իրանց
տունը գնալու էր ըլում՝ Քեռի-Թորոսը ետև ից պահապան էր դնում,
որ չը սրպանեն: Տեսաւ, որ մէրը տրկաղկում է, նիաթը կախ է¹⁾:

Թէ. «Մէրիկ, ընչի՞ ես ըտէնց տխուր»:

Ըսաւ. « Ինչ անեմ, որդի, ասաւ. քանի ըղորմածիկ հէրդ սաղ
էր՝ սաղբանք ինք խաղում, ուրախանում ինք, հրմի սաղբանք խա-
ղող չը կայ, ընկեր ա միտս, ընդուր հըմար քէֆս խարար ա:

Ըսաւ. «Մէրիկ, ես էլ սաղբանք կը խաղանք, արի խաղանք»:

Սկսին սաղբանք խաղալ: Հա տղէն մօրը տարաւ. «Վանչ, Դաս-
նիկ-Որբիկ, ասաւ, դու ընձի տանըմ ես, իմ քէֆս դհա ա խարար
ընում. ես քեզի տանեմ, որ ճիճաղամ»:

Թոյլ թողեց իրան, մէրը տարաւ: Ասաւ. «Իէ ճըճուղամ»:

Ասում ա. «Ի՞նչ ճըճաղամ. պէ ոտը ձեռդ կապեմ, որվրէդ ճեճաղամ»:

Ասաւ. «Հրէն ա ճուպանը²⁾, պէ կապի»:

Ասաւ. «Ճուպանը քեզի կը դիմանայ»:

«Պեր գութանի պընատով³⁾ կապէ տանից, ես կ'ախտուեմ, վը-
րէս ճըճաղայ»:

Ին պահապաններն էլ թագուն թամաշայ են անում, տեսնն
տղի կլխին ինչ օչին կը խաղան:

Պերին տղին պընատով լաւ փաթթին սընից: Որ փաթթիցին
պըճան՝ ասաւ. «Բաղդատայ խալիֆայ, դէ արի թուրը քաշի տղի
կլօխը կտրէ»: Որ ըտէնց ասաւ՝ տղէն թափ տըլաւ իրեն, պընատէն
կտրաւ ու տղէն չարձըկուաւ:

«Եա, մէրիկ, մէագեար դու ընձի սպանջու իր պերէ»:

«Զէ, որդի, խ դաստու դէնց արի. քու ուժն ի փորձում: Բա
Դանիկ-Որբիկ, դու ընչով կ'ախտուես»:

«Պերէք իմ նետ ու անեղի լարը իմ ձեռիս բըթները ետևանց
կապէք, ես կ'ախտուեմ»:

¹⁾ Դեմքը կտի է, ունքերը ժողոված: ²⁾ Հասա պարան: ³⁾ Զղթայ:

Պերին հաղղատայ խալիֆի հետ սիւնդ կապեցին տղի բըթները բաժակից:

Ասաւ. «Իէ, հաղղատայ խալիֆայ, թուրը քաշի, սրպանի»:

Տղէն փորձեց, չկարցաւ ո՛ր լարը կտրէր: Էն ժամանակ հաղղատայ խալիֆէն պերում էր, տղէն ճըշում էր, բանձրանում, էլ թուրը չէր գիպնում տղին, տղէն փախնում էր:

Եղ պահագանները հաւարը քցին Քեռի-Թորոսին, թէ. «Նրի, որ տղին կը սրպանեն հըմի»:

Էկան հասան, տղին ըղոնց ձեռնից առան. առան տղի բըթները չարձրեցին: Ասաւ. «Ո՛րդի էն օրը որ ես բէ ասումի թէ ըտուր կոխ կտրէ, ըտուց քեզ փորձանք կը գա՛ն: Տըղի բըթները որ չարձրեց՝ տղէն թուրը քաշեց հաղղատայ խալիֆի գլխը կտրեց: Քամիակը տարաւ ջոկ տեղ ֆորեց, միայն գլխը չկրանց շլ. մ.բ.է տըրին ֆորեց:

Մնաց մէ ութ ին—տաս օր արան, ին ընցաւ. Քեռի-Թորոսն էթում էր ժամ. տեսաւ որ մէ լացի ձէն ա կալըմ: Կնաց տեսաւ օխըլտի փանջարից իշկեց, որ Դառնիկ-Որբիկի մէրը հաղղատայ խալիֆի կոխը հաներ ա, մօրուքը խինաց ա գրէ, չ'աչքերը գեղ ա գրէ, օրնաւոր գարդարեր ա ու գրէ փէշը, նստէ գովասանք ա անըմ.— «Էն սուրը որ քաշին քեզի՛ քաշէին Դառնիկ-Որբիկին, էն թուրը, որ քէ տուեցին՝ տին Դառնիկ-Որբիկին, էն գերեզմանն ինչ քէ կապէցին, կապէին Դառնիկ-Որբիկին»: Քեռի-Թորոսը այդ պաները լսելով էլ ժամ չը կնաց՝ ետ գարձաւ գնաց Դառնիկ-Որբիկին ասաւ. «Դառնիկ-Որբիկ, արի մի տես մէրդ ինչ լաւ գովասանք ա անըմ: Դառնիկ-Որբիկն ու Քեռի-Թորոսն էկան իրար խեւ, էկան տեսան, որ ինչպէս որ Քեռի-Թորոսը լսեց, էնպէս էլ, էղ լսեց:

«Էն սուրը, որ քաշին քեզի՛ քաշէին Դառնիկ-Որբիկին. էն թուրը, որ քէ տուեցին՝ տին Դառնիկ-Որբիկին. էն գերեզմանն ինչ քէ կապեցին՝ կապէին Դառնիկ Որբիկին:

Որ ներս մտան՝ կոխը կոխեց փեշի տակը: Որ տղէն մտաւ, ասաւ.

«Մ'գէ, մի վէ կաց տեղիցդ մի ջուր առ խմեմ :

Որ էլաւ՝ հաղղատայ խալիֆի գլխն ընկաւ ցածր թըրխակով: «Մ'գէ, ասաւ, էղ ինչ ա, որ փեշիցդ վեր ընկաւ»:

Ասաւ. «Սիկի, որդի. էն շան կոխն էր, կատուները հաներ են խողի մըչից նա ուզի տաների որ խորի խողի մըչի, ամօթու գրո՛ փեշի տակը, թօ չը տեսնեն շան կոխը»:

Ասաւ. «Բա էն ինչ գովասանք իր անըմ, թէ էն սուրը, էն թուրը... Քաշեց թուրն ու մօր կոխը կտրեց: Տարան թաղեցին:

Եփօր մօրը սպանեց, Քեռի-Թորոսը սկսեց թէ. «Ո՛րդի, պէ քէ կարգենք, մեր թագաւորութիւնը խանդարուեր ա - արի, որդի. քէ քրիստոնէի ազնիկ ասնենք. կռապաշտի ազնիկ որ ուզենք՝ մեր կլօսն զայմադարէ կ'ընկնի: Կնացին իրանց սերունդից, իրանց ազգից մէ ախշիկ ուզին ու պատկեցին Դասնիկ-Որբիկն: Պատկեցին, մէ էրկու տարի անցաւ, Դասնիկ-Որբիկը մեռաւ:

Գ

Գ Ե Ի Ի Թ

Դասնիկ-Որբիկը որ մեռաւ, ընդուր կնիկն էլ էրեխով էր մնացել: պառկաւ մէկ սուշ պերեց: Պերեցին կնքեցին, անունը դրին Դասիբ: Սկսեցին Դասիբին պահել, քանի որ մլրը քրիստոնէաց էր, իրանց ազգիցն էր՝ պահում էր: Պահեցին, տղէն էլաւ մէ տաս տասն-հինգ տարեկան տղայ: Սկսեց Քեռի-Թորոսը տղին կարգալ տալ. չը սորուաւ, ճուռ էր «Ծուռ Դասիթ», ին ասում: Սկսեց փեշակի տալ, թէ թօ էթայ փեշակ սրուի բալբի. ինչ փեշակի տուեց. վերջը մէկը կլօխ չհանեց, թէ. «Դասիթ, որ ըտենց ա՛ արի գնա նախըրութիւն աչա, էս գեղի նախիրը պահի»:

Վէ կալաւ էդ գեղի նախիրը ու տարաւ պահեց: Մէ քանի օրից ետը գնաց դարբընի կուշտը, մէ լաւ մէշի՝ չոմախ տարաւ ըն տար կուշտը, ասաւ. «Երբու փութ էրկաթ ըտու կլօխը պրտի հող-ցընես»: Աւ գնում էր ուսին, նախըրը տանում էր պահում էր: Ըրոնց քարաքի դրաղն էլ մէ Փագոխի անունաւոր կեղ կար. ըտոնց նախըրին էլ տաւարը պերում էր ըտու խետ արածացնում ին չօլ՝ ին խաղում իրանց Հրմար: Դասիթը ընդուր թամբահ էր անըմ, թէ Ըսծաւ իրան օրը տաւարը էս նանը կը պերես, որ հօլ խաղանք: Մէկ օր էն Կազոխաց նախըրին շատ ետ պերեց նախիրը՝ որ էկաւ հասաւ՝ հարցեց թէ. «Գուռ ումաղ, ընչի՞ էսքան ետըցար. մէ չոմախ կոսմ կը մահանաս»:

Թը. «Վալլահ, մեր կեղէն մէ իշխան մարդ էր մեռէ. ասի բալ քի հարխէն հասնի, պատարագը տուա կաչ, ուսեմ կամ. տեսայ, որ ետնում ա՛ նախիրը քշի էկայ»:

1) Անտառի 2) Ըստ նպատակի աչք խաղի կուսիւնը հետեւեալն է.— Իւրաքանչիւրը մի փայտէ գունդ է գնում գետին և գազանակով զարկում, ով շատ հեռացնէ գունդը՝ կը հեծնի միտին: